ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

29.10.2013թ.
211-ի 2

Երեւանի քաղաքապետ
պարոն Տարոն Մարգարյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Մարգարյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. 2013թ.-ին “Էրեբունի-Երեւան” տոնակատարության միջոցառումներից յուրաքանչյուրի իրականացման համար որքա՞ն գումար է նախատեսվել (միջոցառումների նախահաշիվը՝ յուրաքանչյուր միջոցառման համար նախատեսված գումարն առանձին՝ մեկ թվով),
2. 2013թ.-ին “Էրեբունի-Երեւան” տոնակատարության միջոցառումներից յուրաքանչյուրի իրականացման համար որքա՞ն գումար է ծախսվել արդյունքում (յուրաքանչյուր միջոցառման համար ծախսված գումարն առանձին՝ մեկ թվով),
3. Որքա՞ն գումար է նախատեսվել եւ որքա՞ն ծախսվել “Էրեբունի-Երեւան” տոնակատարության բոլոր միջոցառումների համար ընդհանուր:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան